# IDBank SoftPOS
օգտագործման ուղեցույց



# ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ակտիվացման համար հետևյալ պարամետրերի առկայությունը պարտադիր է

1. Android սմարթֆոնի առկայություն
2. Android 8.1 տարբերակ և բարձր
3. NFC հնարավորություն
4. Հաճախորդի էլ. հասցե



# ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

Անհրաժեշտ է
**Google Play**-ից
ներբեռնել
**IDBank SoftPOS**
հավելվածը




1




**1-ին անգամ մուտք գործելու համար անհրաժեշտ է**

- մուտքագրել էլ. հասցեն
- նշված էլ. հասցեին ստացված ՊԻՆ կոդը

2

Այնուհետև անհրաժեշտ է ստեղծել և հաստատել սեփական **ՊԻՆ կոդ**, որից հետո հնարավոր կլինի մուտք գործել ծրագիր:

3

# ՎՃԱՐՈՒՄ




**Վճարում կատարելու համար անհրաժեշտ է**

- մուտքագրել գումարը
- սեղմել վճարման կոճակը

1

Այնուհետև էկրանին կհայտնվի **վճարային քարտը մոտեցնելու** նշանը, որից հետո անհրաժեշտ է **քարտը մոտեցնել հեռախոսի հետնամասին**:




2




Գործարքը հաստատելուց հետո, էկրանին կհայտնվի հաստատման նշանը և **«Գործարքը հաստատված է»** գրառումը:

3

# ՎՃԱՐՈՒՄ







Գեներացվում է **էլեկտրոնային կտրոն**: Սեղմելով կոճակը, էլեկտրոնային կտրոնը կարելի է ուղարկել **հաճախորդի էլ. հասցեին**:

4




Էլ. կտրոնը ուղարկելուց հետո արտաբերվում է **Արդյունք** պատուհանը, որտեղ արտաբերված է **գործարքի կարգավիճակը**:

**Ավարտել** կոճակը սեղմելուց հետո կրկին կարտաբերվի սկզբնական պատուհանը:

5

# ՉԵՂԱՐԿՈՒՄ

Չեղարկում իրականացնելու համար անհրաժեշտ է մուտք գործել **«Գործարքներ»** ենթաբաժին, որտեղ արտաբերվում են գործարքները:




1







Անհրաժեշտ է ընտրել չեղարկման ենթակա գործարքը, այնուհետև ընտրել **«Չեղարկել գործարքը»**: Հայտնվող պատուհանում անհրաժեշտ է ևս մեկ անգամ սեղմել **«Չեղարկել գործարքը»**

2

Այնուհետև էկրանին կհայտնվի **քարտը մոտեցնելու** նշանը: Անհրաժեշտ է քարտը մոտեցնել հեռախոսի հետնամասին: Գործարքը հաստատելուց հետո, էկրանին կհայտնվի հաստատման նշանը և **«Կատարվել է չեղարկում»** գրառումը:




3

# ԱՅԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ




Գործարքներ ենթաբաժնում արտաբերվում են կատարված գործարքները և այդ գործարքների կարգավիճակները
Օրինակ՝

- ***Վճարում***
- ***Վերադարձ***
- ***Չեղարկում***
- ***Վճարումը չի կատարվել***

1

Հավելվածն ունի նաև գործարքների **որոնման** և **զտման** հնարավորություն:




2




**Զտման էջը** հնարավորություն է ընձեռում կիրառել տարբեր տեսակի զտումներ և գտնել համապատասխան գործարքը:

3

# ՓԱԹԵԹԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ

Սեղմելով ✉ կոճակը,
կարելի է բոլոր գործարքների
փաթեթն **ուղարկել էլ. հասցեին**:

1




Սեղմելով **Ուղարկել հաշվետվություն**,
այնուհետև սեղմել ⚙ կոճակը,
***Օրվա փակում***

2